ԷԴ. Մ. ՋՐԲԱՇՅԱՆ

(Ծննդյան 70-ամյակի առթիվ)

Լրացավ հայ անվանի գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՍՍՀ ԳԱԱ իսկական անդամ, Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն Էդվարդ Մկրտչի Ջրբաշյանի ծննդյան 70-ամյակը։

Էդ. Ջրբաշյանը ծնվել է 1923 թ. սեպտեմբերի 24-ին, Երևանում, Վանից գաղթած ծնողների ընտանիքում։ 1941 թ. Երևանի Շ. Ռուսթավելու անվան միջնակարգ դպրոցը ավարտելը և Հայրենական պատերազմի սկսվելը համընկնում են իրար և Ջրբաշյանը զորակոչվում է բանակ, ուր ծառայում է մինչ 1945 թ.։ 1942-ի աշնանից, լեյտենանտի կոչումով, սկսում է անմիջական մասնակցությունը ռազմական գործողություններին, նախ՝ Հյուսիսային Կովկասում, այնուհետև 3-րդ Բելոռուսական ճակատում։ 1944 թ. հոկտեմբերի վերջին, գրոհի ժամանակ, երիտասարդ մարտկոցի հրամանատարը ծանր վիրավորվում է, շուրջ 10 ամիս տարբեր զինվորական հոսպիտալներում ապաքինվում և զորացրվում է արդեն հաղթանակից հետո։

1945 թ. սեպտեմբերին իրականանում է Ջրբաշյանի երազանքը. նա ընդունվում է Երևանի պետհամալսարանի բանասիրական ֆակուլտետը։ Համալսարանում նրա դասախոսների թվում եղել են՝ Ա. Տերտերյանը, Գ. Ղափանցյանը, Մ. Մկրյանը, Գ. Սևակը, Էդ. Աղայանը, Գ. Ջահուկյանը և ուրիշներ։ Համալսարանը ավարտելուց անմիջապես հետո նա սկսել է գրականության տեսություն դասավանդել։ Նույն մասնագիտության գծով 1954 թ. պաշտպանում է թեկնածուական դիսերտացիա։ Ջրբաշյանը երկար տարիներ ղեկավարել է համալսարանի գրականության տեսության և գեղագիտության ամբիոնը։ 1965 թ. ՀԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում իր «Թումանյանի պոեմները» մենագրությունը պաշտպանում է որպես դոկտորական դիսերտացիա։

Դասախոսական աշխատանքներին զուգահեռ նա սկսում է իր աշխատանքները Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում, ուր 1966—1970 թթ. ղեկավարում է գրականության տեսության բաժինը։ Այդ աշխատանքի անդրանիկ արդյունքը եղավ Ջրբաշյանի անմիջական մասնակցությամբ ու խմբագրությամբ ստեղծված «Գրական ժանրեր»՝ իր բնույթի մեջ առաջին տեսական ժողովածուն (1973)։

Էդ. Ջրբաշյանը իր գործուն մասնակցությունն է բերել նաև Հայաստանի գրական կազմակերպությունների աշխատանքներին, եղել է «Գրական թերթի» խմբագրի տեղակալ (1953—1954 թթ.) և «Սովետական գրականու-

թյուն» ամսագրի գլխավոր խմբագիր (1961—1962 թթ.), իսկ 1966—1977 թթ.՝ «Բանբեր Երևանի համալսարանի» (հասարակական գիտություններ) նորաբաց հանդեսի գլխավոր խմբագիրը և շատ ջանք է թափել այդ հրատարակության ձևավորման ու հասարակական ճանաչման գործում։

1977 թ. Ջրբաշյանը նշանակվում է Հայաստանի գիտությունների ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն, 1974 թ. ընտրվել է ՀԳԱ թղթակից անդամ, 1982 թ.՝ իսկական անդամ։

Էդ. Ջրբաշյանի գիտական գործունեությունն ընթացել է մի քանի ուղղություններով։ Նրա ուսումնասիրության բնագավառը հիմնականում եղել է XIX և XX դարերի հայ գրականությունը՝ Աբովյանից, Ալիշանից սկսած մինչև ժամանակակից գրական զարգացման հարցերը։ Սակայն Էդ. Ջրբաշյանը հատկապես շատ ջանք ու եռանդ է նվիրել այն բանաստեղծների ստեղծագործության ուսումնասիրությանը, որոնց ինքը համախմբել է իր «Չորս գագաթ» խորհրդանշական վերնագիրը կրող գրքում՝ Հովհ. Թումանյան, Ավ. Իսահակյան, Վ. Տերյան, Ե. Չարենց։ «Չորս գագաթ» գիրքը լույս տեսավ 1982 թ., իսկ 1990 թ. այն հրատարակեց մոսկովյան հայտնի «Սովետսկի պիսատել» հրատարակչությունը։

Արևելահայ գրական հսկաների կողքին գիտնականը միաժամանակ զբաղվել է արևմտահայ պոեզիայի ուսումնասիրությամբ, որի արդյունքը եղան «Միսաք Մեծարենց» (1958 և 1977) և «Ռուբեն Սևակ» (1965) մենագրությունները, ինչպես նաև արևմտահայ պոեզիայի ռուսերեն ժողովածուի (1983, Լենինգրադ) ծավալուն առաջաբանը՝ «Վշտի և պայքարի պոեզիան»։

Սակայն Ջրբաշյանի բոլոր գրական-պատմական հետազոտությունների կենտրոնում արդեն մի քանի տասնամյակ է, որ եղել է ու կա Հովհ. Թումանյանը, իբրև ազգային գրականության համագրական, կենտրոնական դեմք, որն իր մեջ ներառնում է հայ գրականության անցյալի և ներկայի լավագույն ավանդները, ինչպես և ապագա զարգացման առողջ սաղմերը։ Այս դիրքերից է նա կատարել իր հետազոտությունները, որոնք ամփոփվել են՝ «Թումանյանի պոեմները» (1964, 1986), «Թումանյան. Ստեղծագործության պրոբլեմներ» (1988), «Թումանյանը և հայ գրականության ավանդույթները» (գտնվում է տպարանում) մենագրությունների մեջ։ Իսկ ընդհանուր առմամբ թումանյանական նրա աշխատությունները անցնում են հարյուրից։ Այս նվիրումի արդյունքը եղավ նրա ղեկավարությամբ հիմք դրված Հովհ. Թումանյանի նոր ակադեմիականը՝ 10 հատորով, որոնցից առաջին չորսը արդեն լույս են տեսել, իսկ մնացածները, գերակշիռ մասով, պատրաստ են տպագրության։ Այստեղ գլխավոր խմբագրի պարտականություններ կատարելուց բացի, նա հանդես է եկել որպես բնագրերի պատրաստման և ծանոթագրման ակտիվ մասնակից, ինչպես նաև գրել է մի շարք հատորների ներածական, ամփոփիչ հոդվածները՝ Թումանյանի ստեղծագործության տարբեր ժանրերի մասին։

Էդ. Ջրբաշյանը եղել է «Թումանյան. Ուսումնասիրություններ և հրապարակումներ» մատենաշարի ստեղծման նախաձեռնողը և ակտիվ հեղինակներից մեկը։ Ներկայումս Էդ. Ջրբաշյանի ղեկավարած խումբը ձեռնամուխ է եղել մի նոր կարևոր գործի՝ Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրության ստեղծմանը (երկու գրքով)։

Անցած տարիներին գիտնականը մի շարք աշխատություններ է նվիրել գրական առնչությունների տարբեր խնդիրներին։ Այս դեպքում էլ նա աշխատել է ցույց տալ ճշմարիտ ստեղծագործական կապերը, որոնք իրենց էությամբ նպաստում են ազգային գրականության զարգացմանը։ Այս բնույթի գործերից հարկ է հիշատակել՝ «Թումանյանը և Պուշկինը» (1956), «Իսահակյանի «Աբու Լալա Մահարին» և ռոմանտիկական պոեմի ավանդույթները» (1975), «Վահան Տերյանը և Լերմոնտովի պոեզիան» (1974), «Եղիշե Չարենցը և Պուշկինի ժառանգությունը» (1976)։

Էդ. Ջրբաշյանի գիտական հետաքրքրությունների մյուս հիմնական բնագավառը գրականության տեսության խնդիրներն են։ Այստեղ նրան զբաղեցրել են երեք բնույթի հարցեր. գեղարվեստական մեթոդի, գրական ժանրերի դասակարգման սկզբունքների և տաղաչափության ընդհանուր ու կոնկրետ ազգային առանձնահատկությունների ուսումնասիրությունը։

Մ. Արեղյանի հայտնի աշխատություններից հետո, հայկական տաղաչափությունը երկար ժամանակ գտնվում էր մոռացված վիճակում և հալ բանասիրության ամենից քիչ ուսումնասիրված բնագավառն էր։ Սկսած 1960-տկան թթ., Ջրբաշյանի ե նրա մի քանի աշակերտների ջանքերով, այս բնագավառում որոշակի աշխուժություն մտցվեց։ Հիշենք, որ 1974 թ. Երևանում հրավիրվեց համամիութենական գիտաժողով, որի նյութերը լույս տեսան առանձին դրքով («Տաղաչափության պրոբլեմներ», Երևան, 1975)։

Էդ. Ջրբաշյանին է պատկանում նաև հայ իրականության մեջ առաջին գրկանության տեսության ամբողջական ձեռնարկի ստեղծման պատիվը։ Նրա գրած դասագիրքը լույս տեսավ 1961 թ. և քսան տարիների ընթացքում ունեցավ հինգ հրատարակություն, ժամանակի ընթացքում անընդհատ բարելավվելով և կատարելագործվելով։ Այս դասագրքի կարևոր արժանիքը այն է, որ գրականության ընդհանուր տեսական սկզբունքները իմաստավորվել և շարադրվել են հիմնականում հայ դասական գրականության նյութի վրա։ Արդեն ավելի քան երեք տասնամյակ այս դասագիրքը ծառայում է մեր ուսանողներին, մանկավարժներին, գրականության և արվեստի հարցերով հետաքրքրվող ընթերցող շրջաններին։

Գիտնականը ավելի քան մեկուկես տասնամյակ ղեկավարելով ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտը, շատ ջանք և եռանդ է թափել ինստիտուտի գիտական ուժերը հայ գրականության ուսումնասիրության կարևորագույն հարցերի վրա կենտրոնացնելու ուղղությամբ։ Այդ տարիներին ինստիտուտը կազմակերպել է հայ գրականության պատմության հարցերին նվիրված բազմաթիվ գիտաժողովներ, ընթերցումներ, արտագնա գիտական նիստեր՝ Հայաստանի տարբեր շրջաններում։ Լայն արձագանք ունեցավ 1986 թ. աշնանը կայացած հայ միջնադարյան գրականությանը նվիրված միջազգային գիտաժողովը, որի աշխատանքներին մասնակցեցին հարյուրից ավելի հայաստանցի և օտարերկրյա գիտնականներ։ Նշված տարիներին տպագրվեցին ինստիտուտի աշխատակիցների մի քանի տասնյակ գիտական ժողովածուներ և մենագրական աշխատություններ, որոնց ստեղծումը և հրատարակումը, այս կամ այն առումով, նույնպես կապված է Էդ. Ջրբաշյանի անվան հետ։ Հրատարակված գրքերի քանակով գրականության ինստիտուտը տարիներ շարունակ եղել է Հայաստանի ակադեմիայի համակարգի ամենաարգյունավետ հաստատություններից մեկը։

Գիտնականը այսօր ևս աշխատանքային և ստեղծագործական վերելքի մեջ է և իր անգուլ գիտական գործունեության մեջ է տեսնում իր հայրենասիրական պարտքի կատարումը։ Մարտական երկու և աշխատանքային մեկ շքանշանների կողքին, Էդ. Ջրբաշյանը երկու անգամ (1974 և 1980 թթ.) արժանացել է Հայաստանի պետական մրցանակի։ Ցանկանում ենք հարգարժան հոբելյարին քաջառողջություն և իր գիտական բազմաթիվ մտահղացումների իրականացում։

Բանասիր. գիտ. դոկտոր Ա. Վ. ԻՍԱՀԱԿՅԱՆ
Բանասիր. գիտ. դոկտոր. Հ. ԷԴՈՅԱՆ